ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Ա. Գալստյան

Քննարկվել է համայնքի ավագանու նիստում
<< 28 >> դեկտեմբերի 2012թ.

գ. Արտավան
2012

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Գյուղը վերաբնակեցվել է 1949թ. մարտ ամսից: Գյուղը ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում գորգագործի հմտությամբ զարդաքանդակներով, խաչքարերով սրբատաշ քարերով 8-րդ դարի կիսավեր եկեղեցու ավերակները:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1860մ բարձրության վրա: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

Ժողովրդագրություն

Գյուղում ապրում է բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության ;Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.Երեխաներ /0-6տ/ -10
2.Դպրոցական/7-17տ/-62
3.18-62 տարեկան-120
4.Թոշակառուներ-57
5.Հաշմանդամներ-8
6. Աշխատունակներ-135

Գյուղն ունի 96 ծուխ, որոնցից 12-ը ընդգրկված են <<ՓԱՐՈՍԻ>> համակարգում:

Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կազմով՝

- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- Առաջատար մասնագետ-հաշվապահ 1 դրույք
- Հավաքարար 0.5 դրույք

ԳՐԱԴԱՐԱՆ

- Գրադարանավար 0.5 դրույք

Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

- Մշակույթի տուն — չկա
- Գրադարան — գտնվում է գյուղապետարանի վարչական շենքում
- Բուժկետ — գտնվում է գյուղապետարանի վարչական շենքում
- Վարչական շենք — 1 միավոր
- Ջրմուղի ցանց
- Ոռոգման ցանց — 21կմ

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում են գյուղտեխնիկան ու գործիքները: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1970թ.-ին, որի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 25%-ի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը; Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 5կմ ճանապարհ և փողոցներ:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ մոտ 100%-ով: Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ցանցերի վերանորոգման համար:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 106 առանձնատուն, 5.855 հազ.քմ տարածքով: Բնակարանային անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 45-ից ավելի է, որը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվում:

Հողատարածքների օգտագործում

- Համայնքի վարչական տարածքը 7277.72հա
- Վարելահողեր 454.87հա
- Խոտհարք 119.12հա
- Արոտավայր 4542.28հա
- Տնամերձ 54.2հա
- Անօգտագործելի հողեր
- Դաշտային ճանապարհներ
- Արտադրական մաս/կովանոց/
- Ավազի հումք
- Գերեզմանոց 2հա
- Պանսիոնատ
- Դպրոց 1,5հա
- Հուշարձան 47.25հա
- Գյուղամիջյան փողոցներ 4հա
- Սեփականաշնորհված հողեր 386.37հա
- Մեկ հողաբաժնի չափը 325հա

Գյուղատնտեսություն

Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղմթերքների արտադրությունը: Մարդիկ հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 80%:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթնամթերք, միս, բուրդ, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

Կրթություն

Համայնքն ունի 1 միջնակարգ դպրոց, որը նախատեսված է վերանորոգել, ուր սովորում է 60 աշակերտ: Դպրոցն ունի 18 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 3 աշակերտ: Անմխիթար վիճակում է դպրոցի խմելու ջրի ցանցը, սանհանգույցները, դահլիճը, որոնք անհապաղ վերանորոգման կարիք ունեն:

Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքը չունի մշակույթի տուն, ինչի պատճառով համայնքը զրկված է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Գրքոր գրադարանն ունի մոտ 5000 անուն գիրք, որը գտնվում է գյուղապետարանի վարչական շենքում:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում, որը միշտ զբաղեցնում են դպրոցականները:

Առողջապահություն

Համայնքում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է գյուղապետարանի շենքում:

Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքն ունի ավելի քան 17 ԲՈՒՀ-ի շրջանավարտ, տարբեր մասնագիտությունների, որոնք կարողանում են կազմակերպել մշակութային տարբեր միջոց առումներ;
- Համայնքն ունի տուրիզմի զարգացման լայն հնարավորություն:

Համայնքի թույլ կողմերը

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցի անմխիթար վիճակը
- Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
- Գործազրկություն
- Հաճախակի կրկնվող երաշտ
- Բնամթերքի իրացում

Համայնքի հնավորությունները

- Մեծ աշխատուժի առկայություն
- Մեծ քանակությամբ անջրդի ազատ վարելահողեր

Համայնքի սպառնացող վտանգները

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը /կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդություն-ների աղբյուր/
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ և բարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքն ապահովվել որակյալ խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը ազատ ժամերին
- Ապահովվել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգերը կառուցվել են 1960թ.: Ջրագծի երկարությունը կազմում է 12կմ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսավորման սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 50 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերը անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս են հասցնում խողովակաշարերին:Սելավների պատճառով խողովակները ջարդվում են ու փչանում: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի հիմնական վերանորոգումը:

Ընդառաջելով բնակչության դիմումները՝ սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման Ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ապահովվել համայնքը որակյալ խմելու ջրով
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- Երաշտի տարիներին բանջարաբոստանային կուլտուրաները փրկել երաշտից
- Կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքները իրականացնող կապալառու շին. Կազմակերպությունը
- Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքը 100%-ով կապահովվի խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայիս 20-30%-ից հասնելով 0-5%-ի, կբարելավվի գյուղի բնակչության սոցիալ- տնտեսական պայմանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 7կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի 50.000ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ---------- 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ---------- 3

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը---------- 4

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ---------- 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ----------6

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ---------- 7

ԾՐԱԳԻՐ 2 ----------8